ԱԿ-ԳՀԱՊՁԲ-15/1 ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի հանձնաժողովի հայտերի գնահատման նիստից

Արձանագրություն N3

ք. Երևան	12.12.2017թ.
Դ.Անհաղթի 23, 4-րդ հարկ, 7-րդ սենյակ	ժամը 10:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝ փոխտնօրեն	Գ.Մեսրոպյան
անդամներ՝	
գույքի վարձակալության տրամադրման աճուրդի կազմակերպման բաժնի պետ	Ա.Դավթյան
մասնավորեցման գործարքների և հրապարակային սակարկությունների կազմակերպման բաժնի պետ	Ա.Ակբալյան
հանձնաժողովի քարտուղար, գնումների համակարգող	Ս. Մեջլումբան

Համաձայն ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 4-ի N526-Ն որոշման 46-րդ կետի հրավիրվել է հայտերի գնահատման նիստ, որի ընթացքում արձանագրվել է, որ.

1. **ԱԿ-ԳՀԱՊՁԲ-15/1 ծածկագրով գնանշման հարցման միջոցով մրցույթի հրավերի պահանջներին համապատասխանման որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի ներկայացման մասին**

1.1Ըստ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված եզրակացության՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունի, ինչպես նաև բավարարում է հրավերի 2.4 կետի << Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերվող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջներին:

1.2Մասնակցի կողմից ներկայացված որակավորումը հիմնավորող փաստաթղթերը համապատասխանում են հրավերի պահանջներին:

2. **ԱԿ-ԳՀԱՊՁԲ-15/1 ծածկագրով գնանշման հարցման միջոցով մրցույթի գնահատման արդյունքների հաստատման և ամփոփման մասին**

2.1Հանձնաժողովը որոշեց ընտրված մասնակից ճանաչել <<Ֆլեշ>>ՍՊԸ-ին:

2.2Ընտրված մասնակցի հետ կնքել պայմանագիր օրենքով սահմանված կարգով անգործության ժամկետի ավարտից հետո: <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիրը կնքելու մասին որոշման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվա և պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրվա միջև ընկած ժամանակահատվածը, ըստ նույն հոդվածի 4-րդ կետի տվյալ գնման ընթացակարգի համար անգործության ժամկետը կիրառելի չէ, քանի որ միայն մեկ մասնակից է հայտ ներկայացրել, որի հետ կնքվում է պայմանագիր:

2.3<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 9-րդ կետի համաձայն հայտերի գնահատման նիստին հաջորդող աշխատանքային օրը նիստի արձանագրությունը հրապարակել տեղեկագրում:

Որոշումը ընդունվել է 3 կողմ, 0 դեմ ձայներով:

3.Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները

Հանձնաժողովի նախագահ՝ փոխտնօրեն Գ.Մեսրոպյան

անդամներ՝

գույքի վարձակալության տրամադրման աճուրդի կազմակերպման բաժնի պետ Ա.Դավթյան

մասնավորեցման գործարքների և հրապարակային սակարկությունների կազմակերպման բաժնի պետ Ա.Ակբալյան

հանձնաժողովի քարտուղար, գնումների համակարգող Ս. Մեջլումբան